

ներից ամենից աւելի յաջողուածն է թուում ինձ այս քերթուածը,  
մանաւանդ այս քերթուածի վերջին տները՝ «Մնասցիք բարեաւ Հայ-  
րենիք և լերինք Անձեացեաց . . . » իւր շարունակութեամբը:

Գ. Ց. Մ.

## Ի ՅԻՇԱՏԱԿ

Ա. ՆՉՆԱՏՈՒՐ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ

### ԱՏՈՄԵԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՅ

## ԶԻ ԿԱԼԷՔ

Զի կալէք, ձի կալէք, ձայն տայ ձեզ դոչէ  
Զօրավար գնդին Գնունին Ատմ.  
Ահա եկին հասին ի վերայ մեր  
Մոլեկրօն պարսկական ջոխր սևադունդ:  
Զինչ կամէք և զինչ ընարէք, իշխան Բոքչուունի  
Եւ զինակիցք իմ քաջակորով՝  
Զմահ մարտիրոսական, երկնային ազատութիւն,  
Թէ զիւրանս աշխարհի, հալածանք և ստրկութիւն.  
Ամբարշտին լուծ  
Կրել շարաչար:

Թէ ասէք բանալ խաչին դրօշ  
Արիապէս մարտնչիլ ընդ խաչի թշնամոյն,  
Որպէս քաջամարտիկ անձնուէր զինուոր,  
Վասն Քրիստոսի հաւատոյն և մեր Հայրենեաց սիրոյն,  
Թէ ի բաց եղեալ սուր կամովին կալ անմուռնչ,  
Որպէս զոչխար ի զենումն:

Խնդացէք, երանի է մեզ,

Թէ հետևելով հետոյ Խաչելոյն,

Որ կամա՛ւ կրեց վշտին խաչ,  
 Կամա՛ւ կախեցաւ ի փայտէն մահու,  
 Կամա՛ւ մեռաւ ի խաչին,  
 Եւ էջ ի գերեզման մեռելոց.  
 Պահ մի ննջեց ի քուն, այլ սիրան էր արթուն,  
 Եւ զարթեաւ որպէս Յուդայի մահչոյ առիւծ,  
 Զի Աստուած էր որ մեռաւ մարմնով  
 Եւ յարեաւ ի մեռելոց:

Վասն խաչին և Քրիստոսի անսահման սիրոյն  
 Յո՛ւշ, յո՛ւշ առնեմ՝ ձեզ բան  
 Գեթսեմանի կեդրոնեան ձորոյն՝  
 Ուր ի մատնութեան գիշերին կալան զՅիսուս.  
 Քաջագօտի Պետրոս սրամտելով  
 Հան զսուր ի պատենէն.  
 Տէր, ասաց, թոյլ տուր ինձ այժմ,  
 Հարցուք զսոսա սրով.  
 —Սուրդ ի պատեան գիր—ասաց Տէր Յիսուս,  
 Զի որ առնուցաւ սուր՝ անկանխցի սրով:

Օ՛րն ի բաց գրէք սուրն և նիզակ,  
 Առէք միայն Յիսուսի խաչն,  
 Հանէք ի կրծոց և ի թիկանց ձերոց  
 Երկաթակուռ անգծելի զրահ,  
 Սոսկ մերկամարմին լերուք.  
 Մերկացեալք յաշխարհէ՛  
 Երթամք ի յերկինս լինիմք լուսազգեաց:

Պսակադիրն Յիսուս յայանապէս եցոյց ինձ  
 Ի տեսլեան,  
 Թէ ահա պատրաստեալ կայ ձեզ  
 Լուսեղէն պսակ անթառամ.  
 Եկն՛յք, հանգուցից զձեզ,  
 Ո՛վ աշխատաւոր, բեռնաւոր իմ ծառայք,  
 Յերկնից անմատչելի վերագոյն կայան,  
 Ուր ոչ հասանեն ձեռք ամբարշտաց:

Յառաջ մատիր դու նախ,  
Անդրանիկ որդեակդ իմ՝ Վարոս,  
Զքեզ նախանուէր զոհ տամ՝ ես՝

Առ ի սէր Յիսուսի անպարտ Խաչելոյն,  
Միթէ թողնում զքեզ սղջ  
Ի ձեռս անօրէն Պարսից անողորմ,  
Որ դու ուրանաս խաչն և կրօն,  
Եւ մեր սուրբ հաւատն հայրենատուր  
Փոխես ընդ խաւարին,

Դու քո լոյս Քրիստոս՝

Դենին Որմզդական առասպել և սուտ:

Հոգիս զուարթագին է և ուրախ.

Զողբամ զքեզ, անձկալիդ իմ՝ Վարոս,  
Թէ չտեսի զքո թաղն և պսակ,  
Քո հարսանեաց ցնծութեան օր,  
Որ զքե պարառեալ երգէին, պարէին  
Նորատի պատանիք և կուսանք Հայոց:  
Թո՛ղ այս աշխարհի հայրենի տուն, հարսանեաց տօն,  
Փութա յերկնից հարսնետուն:

Այլ ևս մի դար Վարոս, մատիր դու ի սուր,

Գնա՛ հասիր քան զիս վաղագոյն,  
Մնա՛ համարձակ, բաց է քո դէմ՝ արքայութեան գուռն,  
Անդ հարսնաւոր հրեշտակք  
Գլխոյդ բոլորեն պսակ ծաղկահիւս,  
Բոսորագեղ գունով պճնեալ.  
Որպէս կարմիր վարդ  
Ի վարձ և արխուր քո թափած արեան:

Ահա և Գնունին Ատամ,

Ընդ Վարոսի իւր որդւոյն,  
Կամակար տայ զանձն իւր  
Ի սուր և ի սպանումն:  
Յառաջ մատիք և դուր ընդ իս,

Ո՛վ իմ անձնատուր զինուորը,  
 Դուր յօժարասիրտ զանձինս ձեր  
 Ի սուր, ի մահ և ի զոհ,  
 Թուիր թէ յաչըս մարդկան  
 Մեռանիք դուր ի զուր.  
 Ցնծացէք, լի է անմահութեամբ  
 Ձեր հաւատն և յոյս:

Մի երկնչիք դուր, որ սպանանեն միայն  
 Մահկանացու մարմին,  
 Հողին է կենդանատուր,  
 Մարմին օգնէ և ոչինչ.  
 Որչափ մնամք ի մարմնի աստ կենցաղոյս,  
 Օտարանամք ի Տեառնէ, վկայէ Պօղոս.  
 Թէ վաղ թէ անագան մեռանելոց եմք:

Ո՛վ էր այն անարի զինուոր վատասիրտ՝  
 Որ գաղտ ել ի քաջաց գնդէն,  
 Գնաց գտաւ մի գաշաի հովիւ.  
 Ահա տամ քեզ, ասաց, տես,  
 Իմ համազգեստ գեղեցիկ.  
 Տնւր ինձ փոխարէն քո հովուական ցնցոտին:  
 Քանի՛ մեծ բազդ էր այս շահաւոր տուր և առ,  
 Զոր կորոյս խօթամիտ զինուոր,  
 Շահեցաւ հովիւն քաջ,  
 Խլեց զինուորէն լուսեղէն պսակ:

Համբարձէք զաչըս ձեր,  
 Ո՛վ խաչակիր նահատակք,  
 Ահա ի գլուխ լերին Անձևացեաց,  
 Տեսէք, երևի Գողգոթային խաչ.  
 Ի խաչէն լոյս փայլի, լուսէն ձայն տայ մեզ  
 Աստուածորդին խաչեալն:  
 Ես ի խաչ բարձրացայ,  
 Խաչիւ յաղթեցի աշխարհին.

Որ զինուորեալդ էք, ս՛վ դուք,  
 Ընդ դրօշակաւ իմոյ խաչին,  
 Օ՞հ քաջալերեցարսւք իմ՝ զօրատուր խաչիւ,  
 Զի և դուք յազլթիցէք աշխարհին:

Մնասջիք բարեաւ Հայրենիք  
 Եւ լերինք Սնձևացեաց,  
 Քաւ թէ դառնագին սրտիւ,  
 Ես ձեզ անէծս կարգամ.

Որպէս կարգայր Դաւիթ,  
 Սրտառուչ, ողբաձայն:  
 «Ո՛վ արևնապարտ լերինք Գեղըսույ,  
 Մի՛ իջցէ ի վերայ ձեր ցօղ  
 Երկնածիր օրհնութեան.

Ուր անկաւ Սաւուղ թագաւոր  
 Եւ սիրեցեալն իմ՝ Յովնաթան»:

Այլ ես օրհնութիւն կարգամ ձեզ,  
 Ծաղկազարդ լերինք Հայրենեաց,

Ուր անկան ուխտագիր զինուորք  
 Տիրասէր գնդին Ատոմեան:  
 Ի ծոցոյ ձեր բլխին Տիգրիսի ակունք,

Սառնորակ, աղբիւրաշատ,

Ուր խառնեցան նահատակ վկայից

Սուրբ արեանց վտակք.

Ներկեցան Տիգրիսին Ղուրք,

Դարձան ի գոյն արեան:

Հարցի, ս՛վ Տիգրիս, ո՞ւր առեալ տանիս  
 Դու զՀայոց արիւն.

Ո՞հ, ի հեռաստան, ի հեռաստան.

Ասաց, տանիմ թափեմ ես ի ծոցն Ովկիանու.

Ասի, աւաղ, ծովացաւ և յոյժ ծովացաւ,

Ծով դարձաւ Հայոց արիւն:

Տէր, Հայր մեր գթած,

Տէր դատաւոր արդար,

Ահա մարտիրոս վկայից  
 Սուրբ արեան յիշատակ  
 Հանեմք մինչև յերկինս՝  
 Ողորմութեան Աթոռոյդ առաջ.  
 Բնւ և շատ եղև առ ի խրատ մեզ,  
 Ո՛վ բարեգութ Հայր,  
 Միթէ մոռանաս զմեզ իսպառ:  
 Իեռ ևս թողնու ի տառապանս,  
 Տէր, ապաւէն մեր դու յազգէ մինչև յազգ:



«ՔԱՐՈՉԵԱՅ ՅԱՌԱՔԵԱԼՍՆ»

Ե Ի

«ՅՈՅՍ ՅԱՐՈՒԹԵԱՆ».

Պաշտամունքը եկեղեցւոյ կարգաւորութեան մէջ ամէնից աւելի հաստատուն, քիչ փոփոխուող տարրն է իսկապէս: Մի անգամ որ կրօնական գաղափարն ու զգացմունքը համապատասխան արտայայտութիւն են գտնում այստեղ՝ նոյնանում են շուտով այն կաղապարի հետ, որի մէջ ձուլուել են, և այդ կաղապարը գառնում է մի նուիրական սրբութիւն. համայնքի աչքն ու ականջը վարժուում է միշտ նոյն պատեանի մէջ տեսնել իւր հօգւոյ գանձը՝ նորա վերայ եղած փոքրիկ փոփոխութիւններն անգամ իբրև խորթութիւն, իբրև մի տեսակ սրբապղծութիւն է նկատում այնուհետև: Սակայն և այնպէս այդ փոփոխութիւններն անդադար տեղի են ունենում՝ յաճախ բոլորովին աննկատելի կերպով, դարերի ընթացքում, և մինչ մեզ թուում է թէ նոյնն ենք պահել, ինչ որ էր հազար տարիներ առաջ՝ այժմեանի և նախկինի փոքր ի շատէ լուրջ համե-